ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱԷՅ ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/37 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Արտաքին չափսեր 7500 մմ x 7600 մմ x 5500 մմ: Հիմնական կառուցվածքային խողովակները՝ Պողպատե խողովակ՝ Ø114 մմ, 2–2,5 մմ պատի հաստությամբ: Խողովակների արտաքին ծածկույթը՝ հակակոռոզիոն պոլիմերային փոշեներկում: Պլաստիկ տարրերը պետք է պատրաստված լինեն բարձր ամրության պոլիէթիլենից (LLDPE) ոչ տոքսիկ հումքից, հաստությունը ոչ պակաս, քան 8 մմ: Բոլոր դետալները պետք է դիմացկուն լինեն ուլտրամանուշակագույն ճառագայթների, ջերմաստիճանի տատանումների և մեխանիկական ազդեցության նկատմամբ: Օգտագործման տարիքային խումբ՝ 3-12 տարեկան երեխաների համար: Տեղադրումն իրականացվում է բետոնացման եղանակով առնվազն 300 մմ տրամագծով 500 մմ խորությամբ փոսեր մեջ: Նախատեսված է բացօթյա (խաղահրապարակներ, դպրոցներ, մանկապարտեզներ, զբոսայգիներ) տարածքների համար: Խաղասարքի բոլոր դետալները պետք է լինեն զուրկ ցանցակացած տեսակի դեֆորմացիաներից: Գինը ներառում է խաղասարքը ընդգրկող ամբողջական տարածքի բետոնապատումը, ռետինապատումը և եզրաքարերի տեղադրումը, որոնց բնութագրերը ներկայացվում են ստորև. - Իրականացնել տարածքի ձեռքով հարթեցում, խճային նախաշերտի իրականացում 5սմ հաստությամբ, ամրանային ցանց՝ պողպատե, եռակցված, BP d=5,0մմ, ԵԲ նախաշերտի պատրաստում նվազագույնը B15 դասի բետոնից 50մմ հաստությամբ: - Բետոնե եզրաքարեր՝ տեղադրումով, 1000*200*80մմ չափերով, պատրաստված նվազագույնը B15 դասի բետոնից, համապատասխան բետոնե հիմքի պատրաստումով: - Միաձույլ ռետինե հատակի պատրաստում: Հաստությունը՝ 20 մմ, գույնը՝ համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նյութը՝ 90% ռետինե մանրահատիկ, կապակցիչ՝ պոլիուրեթանային սոսինձ, և պիգմենտային

	ներկ: Պիգմենտային ներկը օգտագործվում է ամբողջ 20մմ հաստությունը նույն գույնով ներկելու համար: Խտությունը՝ 850 կգ/մ3 - 1000 կգ/մ3: Օգտագործման համար թույլատրելի ջերմաստիճանը՝ -60ºC.....+60ºC: Ցրտահարության դիմադրություն. 20 ցիկլ չի փոխվում - 20˚C: Հրդեհային անվտանգության դաս՝ V2, G2, D2, RP2, T2: Նյութի քայքայումը՝ 0,5 գ/սմ2: Առաձգական ուժ՝ 1,05-1,20 ՄՊա: Նյութի կարծրություն՝ 60-65 միավոր: Ջրակայունություն՝ ջրաթափանց, ջրակայուն, փտելու և բորբոսնելու նկատմամբ դիմացկունություն: Տեղադրումը կատարվում է տարածքի փոշեզրկման և բետոնապատ տարածքը White Spirit կամ համարժեք նյութով մշակումից հետո: Նույն պահին պիգմենտային ներկի, ռետինե մանրահատիկի և պոլիուրթենային սոսնձի պատրաստված խառնուրդը համապատասխան տաքացվող գլանակով հարթեցվում է և խտացվում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО АЭЙ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/37 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	